ԱՍԱՆ ԴՐԲՈՅԱՆ

ԹԱՐԳՄԱՆԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԵՐԸ ԳՐԱԿԱՆ ՔՐԴԵՐԵՆԻ ՍԿԶԲՆԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

Հայաստանում քրդական գրության սկզբնավորումը առաջին իսկ օրերից ընթացավ երկու ուղղություններով՝ թարգմանական և ոչթարգմանական գրականության ստեղծմամբ: Գրության այս երկու բնագավառները քրդերեն գրական լեզվի կազմավորման և զարգացման երկու աղբյուրներ են հանդիսացել և այսօր էլ շարունակում են մնալ այդպիսին: Ընդ որում տարբեր ժամանակահատվածներում նրանք ունեցել են տարբեր աստիճանի մասնակցություն, դեր ու նշանակություն այս գործում: Նրանց գիտական նկարագրության և համակարգային քննության խնդրի բարձրացումն ու լուծումը չափազանց կարևոր է ինչպես գրական քրդերենի սկզբնավորման և զարգացման պատմության հարցերի լուսաբանման առումով, այնպես էլ այդ լեզվի կանոնավորման հարցերի մշակման տեսակետից: Սակայն քրդ լեզվաբանության մեջ նրանք դեռևս չեն դիտարկվել և սպասում են իրենց առանձին հատուկ ուսումնասիրությանը:

Ներկա հոդվածի սահմանափակ շրջանակներում առաջին անգամ փորձ է արվում լուսաբանել թարգմանական գրականության դերը գրական քրդերենի սկզբնավորման և զարգացման գործում:

Հայաստանում քրդական այբուբենի հիմնումը հենարան հանդիսացավ քրդական գրության գոյացման համար, որով պայմանավորվեց գրական քրդերենի սկզբնավորման հնարավորությունը: 1921-1938թթ. Սովետական միությունում քրդերեն լեզվով հրատարակվեց ընդամենը 238 անուն գիրք, որից 96-ը թարգմանություններ էին, իսկ մնացած 142-ը՝ ոչ – թարգմանություններ[1]:

Թարգմանական և ոչթարգմանական քրդական գրությունը ավելի հաճախակի է երևան գալիս և կատարելագործվում հատկապես XXդ. 60-ական թվականներից սկսած: 1939-1945թթ. որոշ ընդմիջումից հետո, սկսած 1946թ. վերականգնվում է նրա գոյատևման հնարավորությունը:

Շարունակում է լույս տեսնել հանրապետական քրդական «Ռեա Թազա» թերթը, 1946-1990թթ. լույս է տեսնում շուրջ 180 անուն գիրք[2], այդ թվում դպրոցական դասագրքեր, որոնցում նշանակալի տեղ է հատկացվում հայ և ռուս բանաստեղծների և արձակագիրների ստեղծագործությունների թարգմանություններին, ինչպես նաև առանձին թարգմանական դասագրքեր, քուրդ գրողների գործեր և ստեղծագործությունների ժողովածուներ, արժեքավոր թարգմանական ստեղծագործություններ հայ և ռուս գրականությունից և այլն:

Քրդական ոչթարգմանական գրությունը իր սկզբնավորման առաջին քսան տարիների ընթացքում հիմնականում ներկայացվում է հետևյալ երեք խոսակցական ոճերով. գրավոր-առօրյա, բարբառախոսվածքային ոճ, գրավոր–ֆոլկլորային (բանահյուսական) ոճ և գրավոր բարձր կուլտուրական (հարգանքի) ոճ: Նրա գերակշռող մասը՝ մոտ 70 անուն գիրք դպրոցական ձեռնարկներ են՝ քրդերեն լեզվի և քուրդ գրականության առաջին դասագրքերը տարբեր դասարանների աշակերտության համար, ինչպես նաև մեթոդական ձեռնարկներ, դասավանդման ծրագրեր և այլն: Համեմատաբար չնչին քանակ են կազմում, ընդամենը 7 անուն գիրք՝ գեղարվեստական ստեղծագործությունները՝ քրդախոս հայ գրող Նուրիի «Լուսաբացը» (1934), Ա.Շամիլովի «Քուրդ հովիվը» (1935), Ա.Շարոյի «Առաջին լուսաբացը» (1935), Վ.Նադիրի «Նուբարը» և «Կնոջ առևանգումը» (1935), Ա.Սիրազիի «Անցած ժամանակները» (1935)[3]:

Այս վերջին 6 ստեղծագործությունները հանդիսացան առաջին գեղարվեստական գործեր, գրված առաջին քուրդ ստեղծագործողների գրչով: Նրանցում առկա են վերոհիշյալ երեք խոսակցական ոճերի էլեմենտները, սակայն գերակշռողը առօրյա բարբառախոսացվածքային ոճն է:

Առաջին տարիների ոչթարգմանական գրության մասին խոսելիս անհրաժեշտ ենք համարում նշել նաև ժողովրդական բանահյուսության գրառումները՝ Հ.Ջնդիի և Ամինե Ավդալի կողմից հրատարակված «Քրդական բանահյուսության առաջին գիրքը» խորագրով բանահյուսական ժողովածուն (1936), կոմպոզիտոր Կարո Զաքարյանի հրատարակած «Քրդական ժողովրդական երգերը» վերնագրով երգարանը (1936), որոնք ֆոլկլորային ոճի փայլուն նմուշներ են հանդիսանում և մատչելի հիմնարար նյութ են ծառայում այդ ոճի գիտական ուսումնասիրության համար: Դրան պետք է ավելացնել նաև առօրյա խոսակցական ոճով գրված, սակայն մեծ քանակությամբ հրապարակախոսական ոճին բնորոշ էլեմենտներ պարունակող Ա.Շամիլովի «Լենինի կյանքը» և «Կոլխոզի օգտակարությունը գյուղացիության համար» պատմվածքները (1930) և այլն[4]:

Հատկանշական է, որ նոր ձևավորվող ոչթարգմանական գրության ստեղծման մասնակիցները՝ հայ և քուրդ ազգությամբ չեն ունեցել քրդական կրթություն, քրդագիտական գիտելիքներ և հանդիսացել են լոկ կուրմանջի բարբառի իմացողներ: Նրանք ունեցել են հայկական, մասամբ ռուսական կրթություն[5] և հայագիտական ու ռուսագիտական գիտելիքներ, մի հանգամանք, որը իր կնիքն է թողել նրանց ստեղծագործությունների լեզվի վրա և մեծապես նպաստել է ոչթարգմանական գրության արագ ձևավորմանը և արդյունավետ զարգացմանը: Սակայն քրդական ոչթարգմանական գրության ձևավորումն ու զարգացումը ավելի շատ խթանվել է մեկ այլ հանգամանքով՝ նրան զուգահեռ ձևավորվող և զարգացալ թարգմանական գրությամբ, որը սկզբից ի վեր առաջին քուրդ մտավորական–ստեղծագործողների համար յուրատեսակ ընդօրինակության դպրոց է ծառայել, նրանց հաղորդակից դարձրել գրականության ստեղծման արվեստին, նրա տարբեր ոճերի միջոցներին և խնդիրներին:

Թարգմանական գրությունը առանձնահատուկ դեր է խաղացել քրդերեն լեզվով գրության սկզբնավորման և տարածման, քուրդ գրականության հիմնման, նրանում խոսքի նոր ոճերի ձևավորման և գոյություն ունեցող ոճերի ակտիվացման ասպարեզում, որոնք իր հերթին սկզբունքային նշանակություն են ունեցել առաջին անգամ Հայաստանում կազմավորվող քրդերեն գրական լեզվի գոյացման ճանապարհին:

Առաջին արձակ և չափածո գրական գործերի գերակշռող մասը քրդերեն լեզվով, առաջին տարբեր թեմաներով հրապարակախոսական ոճի ստեղծագործությունները, պաշտոնական, քաղաքական, գիտամասսայական, հասարակական – քաղաքական գրականությունը, ինչպես նաև ուսումնական, ուսումնամեթոդական գրականության զգալի մասը հանդիսացել են թարգմանությունները հայերեն և ռուսերեն լեզուներից[6]: Ընդ որում, ինչպես արդեն վերևում նշվեց, թարգմանական գրությունը ավելի ընդարձակ և ընդգրկուն է հանդիսացել գրական լեզվի սկզբնավորման առաջին երկու տասնյակ տարիներին և հետագայում, քան ոչթարգմանական գրությունը: Նրանով ներկայացված 96 անուն գրքերը վերաբերում են քրդերենի համար բացարձակապես նոր սկզբնավորվող խոսքի ոճերին և պարունակում են վերջիններին բնորոշող լեզվական իրողությունները՝ այդ թվում բառապաշարն ու դարձվածապաշարը և այլն:

Քրդերենում խոսքի և լեզվի նոր կազմավորվող ոճերի ընդհանուր շարքում առաջին հերթին առանձնանում է գեղարվեստական գրականության ոճը և լեզուն թարգմանված շուրջ երեսուն անուն գեղարվեստական ստեղծագործություններում, որոնց թվին են պատկանում՝ Լազոյի «Ջասմի պատմությունը» պատմվածքը (1931), Հովհաննես Թումանյանի «Գիքորը» (1932), «Անուշը» (1934), «Շուն ու կատուն» (1935), «Երկերի

ժողովածուն» (1936), «Չարի վերջը» (1937), «Տերն ու ծառան» (1936), «Քաջ Նազարը» (1937) և այլն, Հրաչյա Քոչարի «Խաչե» (1935), Սիրասի «Լաթիֆա» (1936), «Մամե և Այշե» (1935), Հովհաննես Շիրազի «Սիամանթո և Խաչեզարե» (1936), Լ.Ն.Տոլստոյի «Պատմվածքներ կենդանիների մասին» (1935), «Կովկասի գերին» (1937), Ա.Ս.Պուշկինի «Բանաստեղծություններ և պատմվածքներ», «Հեքիաթ ձկան և ձկնորսի մասին» (1937) և այլն[7]:

Թարգմանական գրականության ասպարեզում նշանակալի տեղ են գրավում դրամատիկական ռճի ստեղծագործությունները, որոնց սկզբնավորման գործում մեծ դեր են խաղացել նախկին Ալագյազի շրջանի քրդական թատրոնում տարիներ շարունակ բեմադրվող նախասովետական և սովետական շրջանի հայ թատերագիրների պիեսների թարգմանությունները՝ Գ.Սունդուկյանի «Պեպոն», Ա.Շիրվանզադեի «Նամուսը» և «Չար ոգին», Վրթանես Փափազյանի «Ժայռը», Դ.Դեմիրճյանի «Քաջ Նազարը», Ն.Զարյանի «Վրեժը», Ա.Պապյանի «Բարձրունքը», Ա.Շայբոնի «Ալագյազի հովտում», Ա.Գինոսյանի «Հասոն», «Միրաքի աղջիկը», Ա.Արաքատյանի «Ստախոս տիրացուն» (1930), Հ.Շալջյանի «Նոր ուղին» (1934), «Փառավոր կյանքի ճանապարհին» (1935), պիեսները և այլն[8]:

Դրամատիկական ռճի կայացման գործում մեծ դեր ու նշանակություն ունեցան հատկապես քուրդ հասարակությանը հարազատ քրդական վիպերգերի հայկական պիեսային մշակումների թարգմանությունները՝ Ս.Տարոնցու «Մամե ու Զինեն», Ս.Գինոսյանի «Կառ ու Կուլուկը», «Խաչե և Սիաբանդը», «Հերոսը Զգիր քաղաքից» և այլն[9]:

Թարգմանական տարբեր ենթաոճերի գեղարվեստական գրականությունից ավելի վաղ, դեռևս 1921թ. սկսած, քրդերենով թարգմանական գրությունը ներկայացվում է քրդերենի համար բացարձակապես նոր՝ ուսումնական, ուսումնամեթոդական ոճի գրականությամբ, որով ըստ էության սկիզբ է դրվում գրական քրդերենի ձևավորմանը: Ընդ որում այս գրականությունը ներկայացնում է տարբեր գիտաուսումնական բնագավառներ. թվաբանություն, մաթեմատիկա, ֆիզիկա, քիմիա, բնագիտություն, բուսաբանություն, աշխարհագրություն, կենսաբանություն, հասարակագիտություն և այլն, որոնք արտացոլվել են մասնավորապես հետևյալ դասագրքերում՝ Տ.Չ.,Շ.Ս «Աշխարհագրություն» (1932), Ն.Պոպովա «Թվաբանություն» (1933), Ա.Շավարշյան, Լ.Վարդանյան «Մաթեմատիկա» (1933), Մ.Զարաֆյան և Վ.Աբրահամյան «Բնագիտություն» (1934), Բ.Վախվյատսկի «Բուսաբանություն» (1935), Ն.Պոպովա «Երկրաչափություն» (1935), Ա.Կիսելյով «Հանրահաշիվ» (1937) և այլն[10]: Այս բնագավառների բազմազան տերմինաբանության ներհոսքը քրդերենը զգալիորեն հարստացրեց նրա բառային կազմը, ընդհանուր մասնագի-

տական գիտա-տեխնիկական և արտադրա-տեխնիկական նոմենկլատուրան:

Թարգմանական գրության շնորհիվ առանձին մենագրությունների և քրդական «Ռեա Թազա» թերթի էջերում տարիների ընթացքում հրատարակվող թարգմանական նյութերի տեսքով քրդերենում կազմավորվեց ևս մեկ այլ նոր՝ հրապարակախոսական ոճը զանազան թեմաներով: Այդ գրության օրինակ են ծառայում, մասնավորապես՝ Ա.Ղազարյանի «Քոսը» (1933), Նուրիի և Ջ.Ջալիլի «Կարլ Մարքսի կենսագրությունը» (1934), Վ.Ի.Լենինի «1905թ. հեղափոխության մասին» (1933), Անդրեյի «Զրույց պիոներների հետ 1905թ. հեղափոխության մասին» (1933), Ա.Նավասարդյանի «Տրախտոը» (1933), Ա.Ալեքսանյանի «Ստամոքսային տիֆը» (1934), Մաղակյանի «Անասնապահության մասին» (1934), Ռ.Մարգարյանի «Կանանց առողջապահությունը» (1934), Գր. Հարությունյանի «Ինչպես պաշտպանել կոլխոզի անասուններին հիվանդությունից» (1935), Ա.Մելիքյանի «Մի քանի հիվանդությունների մասին» (1936), Խնկո Ապերի «Տրամվայը Երևանում» (1936), Ա.Խանջյանի «Պայքարի և հաղթանակի ուղիով» (1933) և այլն[11]: Այս ոճին զուգահեռ թարգմանական գրականության միջոցով քրդերում սկզբնավորվեց նաև քաղաքական, գիտաքաղաքական ոճը, որով պայմանավորվեց լեզվի հարստացումը մեծ քանակությամբ քաղաքական, գիտաքաղաքական տերմիններով, որոնք իր արտացոլումն են գտել հրատարակված բառարաններում: Այդ գրականությունից են՝ Ի.Վ.Ստալինի «Սովետական Միության ագրարային քաղաքականության հարցերի շուրջ» (1933), Ա.Խանջյանի «Հնգամյակի հաղթանակը Սովետական Հայաստանում» (1933), Կ.Մարքսի և Ֆ.Էնգելսի «Մանիֆեստը» (1934), Կ.Մարքսի «Վարձու աշխատանքը և կապիտալը» (1935) և այլն[12]:

Վերջապես, թարգմանական գրականության շնորհիվ գրական քրդերենը տիրեց խոսքի պաշտոնական ոճին: Այդ գրականությունից կարելի է նշել՝ «ԿԻՄ-ի կանոնադրությունը» (1931), «Գյուղական արտելի տնտեսության օրենսգիրքը» (1935), «Սովետական Սոցիալիստական Միության սահմանադրությունը» (1936) և այլն[13]:

Ամփոփելով վերևում բերված նյութերը, կարելի է արձանագրել, որ քրդերենը, գրական լեզվի կարգավիճակը ձեռք բերեց շնորհիվ նրանում առկա բոլոր անհրաժեշտ խոսքի և լեզվի ոճերի կազմավորմանը, որում կարևոր դեր կատարեց թարգմանական գրականությունը հայերեն և ռուսերեն լեզուներից: Նոր՝ գեղարվեստական, հրապարակախոսական, քաղաքական, պաշտոնական ոճերի գոյացումը քրդերենում[14] պայմանավորվեց նրանում առկա լեզվանյութի կիրառության բարձր հաճախականությունը, նոր լեզվանյութի՝ բառերի, հասկացությունների, կայուն դարձվածաբանական միավորների կազմությունը, մեծ քանակությամբ փո-

խատուքյունների, այդ թվում միջազգային տերմինների ներմուծումը, որոնք արդեն իր արտացոլումն են գտել հրատարակված բատարաննե-րում, այդ թվում առանձին տերմինաբանական բառարաններում[15]:

ASAN DRBOYAN

THE ROLE OF FOREIGN LITERATURE IN TRANSLATION IN FORMATION AND DEVELOPMENT OF THE LITERARY KURDISH

The different styles of the Literary Kurdish has been formed and developed due to the Translationary Literature.

The paper deals with the researching t`hat the formation of the political, publicistical, belletristical, scientific language styles are the result of the translation process of foreign literature.

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Библиография к'тебед к'брдийэ Советие, hазьркьр Н.А.Алексанйан, Ереван, 1962.
2. Քրդական գիրքը Հայաստանում 1930-1980 թթ., կազմեց Ջ.Ջալիլ, Երևան, 1981թ.
3. Библиография к'тебед к'ӧрдийэ Советие, hазаркьр Н. А. Алексанйан, Ереван, 1962, էջ 34-40.
4. Նույն տեղում, էջ 24:
5. Մասնավորապես, քուրդ գրող Արաբ Շամիլովը ուներ ռուսական կրթություն և նրա ստեղծագործությունները մեծապես արտացոլում են նրա գիտակցությունը:
6. Նրանք ամբողջությամբ ներկայացված են հրատարակված մատենագիտական գործերում: Տես՝ Библиография к'тебед к'ӧрдийэ Советие, hазаркьр Н.А. Алексанйан, Ереван, 1962. Курды Советской Армении, библиография (1920-1980), составил Джалиле Джалил, Ереван, 1987. Քրդական գիրքը Հայաստանում 1930-1980, կազմեց՝ Ջալիլե Ջալիլ, Երևան, 1981:
7. Տես՝ Նույն տեղում:
8. Տես՝ Նույն տեղում:
9. Տես՝ Նույն տեղում: Այս և մյուս պիեսների գրականագիտական բնութագրումը տես՝ Հաջիե Ջնդի, Ակնարկ Սովետական Հայաստանի քրդական գրականության, Երևան, 1970:
10. Библиография к'тебед к'ӧрдийэ Советие hазаркьр Н.А. Алексанйан, Ереван, 1962, էջ 34-40.
11. Տես՝ Նույն տեղում:
12. Տես՝ Նույն տեղում:
13. Տես՝ Նույն տեղում:

14. Նրանց ընկարագրությունը տես՝ Максиме Хәмои, змане к'о̄рди, Литература, Ереван,1990, էջ 109-200; Тәһәред Хәбәрданейә Т'эзә ль заре к'о̄рдед советиеда у пещдаһатьна змане wанн литератури.- "Рйа Тәзә", 1988, N 28.

15. Տես՝ Хәбәрнәмә жь змане фьләй-к'о̄рманщи. Т'әрщмә кьрьн В.Петойан, әмине ә'вдал, һащине Щьнди. Щәрдое Генщо. Рәwан, 1933. Хәбәрнәма терминологиаә һазьр кьрьн проф. А.Хачатрйан, проф. Г.Капансйан, В.Петойан, Ереван, 1939: Курдско-русский словарь составил Ч.Х.Бакаев, под редакцией акад. И.А.Орбели, М., 1957; К.Курдоев, Курдско-русский словарь. М., 1960; М.У.Хамоян, Курдско-русский фразеологический словарь. Ереван, 1979.